

**«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ  
2009Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
(ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ)**

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ**

1) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է թողարկողը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը Ֆերոնոլիթի, մաքուր մոլիբդենի ջարդոնի և կալիումի պերոտենատի արտադրությունն է: Արտադրության հումքը Ընկերությունը ձեռք է բերում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ընկերություններից՝ համաձայն այդ ընկերությունների հետ կնքված համապատասխան պայմանագրերի: Այդ ընկերություններից են.

- «Չանգեգուրի պղնձամոլիբդենային կոնքինատ» ՓԲԸ (ՀՀ) - Մոլիբդենի խտանյութի առք
- «ՆՕԱԷ Ի Ի » Ի ԱԻ (ՌԴ) -Ալյումինի փոշու գնում
- «Վ. Մինասյան» Տրեյդինգ կոմպանի (Իրան) - Ֆերոսիլիցիումի գնում
- «Մոլիբդեն Մոբարիկի Քոնփանի» (Իրան) - Մոլիբդենի նախապես մշակված կոնցենտրատի գնում
- ՄՄ «Ճոնիսթալ» (Վրաստան) - Ֆերոսիլիցիումի գնում
- “Maximex” LLP (Անգլիա) - Խողովակների գնում
- “xàéíà ýíá Êîðáÿ ãðóí èèìèðáä” (Նոր Չեխիական) - Մոլիբդենի կոնցենտրատի գնում
- “Èííáðááí Èíðáð Èíæáñð Èíé” (Բրիտանական Վիրջինյան կղզիներ) -Տեխնիկական մոլիբդենի դիսուլֆիտի գնում
- “BRUNLOW LIMITED INC” (ԱՄՆ) - -Ալյումինի փոշու գնում
- ՄՄ «Ճոնիսթալ» (Վրաստան) - Երկաթե հրաթեփի գնում
- “Ôáððîððáéä” (Ուկրաինա) -Ալյումինի փոշու գնում

Հումքի ձեռքբերման գները սահմանվում են ինչպես նախնական պայմանավորվածության համաձայն, այնպես էլ տարբեր միջազգային բորսաներում ձևավորված ու ամսագրերում հրապարակված մետաղների գներով:

2009 թ. 1-ին եռամսյակի ընթացքում ընկերության արտադրության ծավալը կազմել է 4,323,918,600 դրամ կամ 13,273,000 ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում իրացումը կազմել է 1,547,248,700 դրամ կամ 4,215,300 ԱՄՆ դոլար: Արտադրության ծավալի և իրացման ամփոփ տվյալները բերված են թիվ 1 և թիվ 2 աղյուսակ:

Աղյուսակ 1

**«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ արտադրության ծավալը 2009թ. 1-ին եռամսյակ**

Արտադրվել է	Քանակ		Հազ. դրամ	Հազ. դոլար
	տն	806.0		
Ֆերոնոլիթ	տն	88.0	3,714,512.6	11,402.3
Մաքուր մոլիբդենի ջարդոն	տն	30.0	576,144.9	1,768.6
Կալիումի պերոտենատ	կգ		33,261.1	102.1
Ընդամենը			4,323,918.6	13,273.0

Աղյուսակ 2

**«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ իրացման ծավալը 2009թ. 1-ին եռամսյակ**

Իրացվել է	Քանակ		Հազ. դրամ	Հազ. դոլար
	տն	760.0		
Ֆերոմոլիբդեն	տն	760.0	1,190,238.1	3,201.9
Մաքուր մոլիբդենի ջարդոն	տն	100.0	357,010.6	1,013.4
Կալիումի պերոքսիդ	կգ	0.0	0.0	0.0
Ընդամենը			1,547,248.7	4,215.3

Ընկերության գործունեության հետ կապված հիմնական ռիսկը պայմանավորված է համաշխարհային շուկայում տեղի ունեցող իրադարձություններով: Դրանցից ամենաէականը Ընկերության արտադրանքի և դրա համար անհրաժեշտ հումքի միջազգային գների փոփոխությունն է, ինչն ուղղակիորեն ազդում է Ընկերության շահույթի վրա: Գների անկման պատճառով Ընկերությունն իր արտադրանքը վաճառել է ինքնարժեքից ցածր գնով և կրել է վնաս: Ինքնարժեքը բարձր էր եղել, որովհետև հումքը ձեռք էր բերվել նախօրոք՝ բարձր գնով:

Մյուս ռիսկը արժույթային ռիսկն է: Արտարժույթների փոխարժեքների կտրուկ տատանումները էական ազդեցություն ունեցան Ընկերության որոշ հիմնական ֆինանսական ցուցանիշների վրա: Այս հանգամանքով Ընկերությունը ունեցավ շահույթ:

Նշված երկու գործոններն էլ իրենց անորոշությամբ էապես կազդեն նաև հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 3 և թիվ 4 աղյուսակներում:

Աղյուսակ 3

**ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՎՅԱԼՆԵՐ 2009թ. I եռ.**

Ցուցանիշ	Հազ. դրամ
Իրացված արտադրանքի ինքնարժեք	2,430,905.0
Իրացման ծախսեր	670.0
Վարչական ծախսեր	93,040.0
Գործառնական գործունեությունից վնաս	-977,366.0
Այլ գործառնություններից վնաս	-69,022.0
Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ, այդ թվում՝	1,341,719.0
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից	1,168,973.0
Ավանդի %	174,714.0
2009թ. 1-ին եռամսյակի շահույթ	295,331.0
Դեբիտորական պարտք	9,074,043.0
Կրեդիտորական պարտք	7,872,208.0

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2009թ. I եռ.\*

Ցուցանիշի անվանումը	01.04.2009 թ.
Չուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	17097.593
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	0.037
Ակտիվների շահութաբերություն (ROA)	0.031
Չուտ շահույթի մարժա (NPM)	0.191
Կապիտալի համարժեքության գործակից	0.804
Ֆինանսական կախվածության գործակից	0.243
Բացարձակ իրացվելության գործակից	1.680
Ընթացիկ իրացվելության գործակից	2.839
Ընդհանուր իրացվելության գործակից	3.242
Դերիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	2312.347
Դերիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	0.158
Պաշարների շրջանառելիության գործակից	-3.273
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	-111.516
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	-1.587
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	-230.044

\* Գործակիցների հաշվարկման ժամանակ միջանկյալ ժամանակաշրջանի ցուցանիշները տարեկանացված են:

2) Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Ներկայիս համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում զարգացման նոր ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր չէ անել:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ գեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՉԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Գենիկ Կարապետյան	տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն	Որպես տնօրենների խորհրդի նախագահ՝ տնօրենների խորհրդի աշխատանքների կազմակերպման համար, որպես գլխավոր տնօրեն՝ ընթացիկ գործունեության (այդ թվում՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման կազմակերպման) համար
Գավիթ Կարապետյան	Փոխտնօրեն, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Լյովա Եղիրազարյան	Փոխտնօրեն, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Զիվան Գյուլումյան	Գլխավոր ինժիներ, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Եղիշե Ստեփանյան	Գլխավոր ինժիների տեղակալ, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Միլվա Խաչատրյան	տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր հաշվապահ	Հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար